

Կարևոր տեղեկություններ Ձեր «Medicare Advantage Plan»-ի և «Cal MediConnect»-ի վերաբերյալ

Դուք ստանում եք այս նամակը, քանի որ բավարարում եք «Cal MediConnect» ծրագրի պահանջները և ներկայումս «Medicare Advantage Plan»-ում եք ընդգրկված: Մենք ցանկանում ենք տեղեկացնել Ձեզ, թե ինչպես են փոխվելու Ձեր ներկայիս «Medicare»-ը և «Medi-Cal»-ը:

- Դուք առաջվա նման կստանաք «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները:
- Ձեր ապահովագրության մեջ որևէ ընդհատում տեղի չի ունենա:
- Դուք ընտրության նոր տարբերակներ կունենաք «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր ապահովագրության համար:

Այս նամակի և «Cal MediConnect»-ի վերաբերյալ այլ նյութերի օգնությամբ, որոնք Դուք փոստով կստանաք, Դուք ընտրության նոր տարբերակներ կունենաք այն հարցում, թե ինչպես եք բուժապասարկում ստանալու: Խնդրում ենք ուշադրությամբ կարդալ Ձեր ստացած տեղեկությունները: Եթե հարցեր ունեք, զանգահարեք մեզ հաջորդ էջում նշված հեռախոսահամարներով, և մենք կօգնենք Ձեզ:

Ի՞նչ կլինի, եթե ես ոչինչ չանեմ:

Եթե Դուք ոչինչ չանեք, ապա կընդգրկվեք «Cal MediConnect»-ի այն ծրագրերից մեկում, որն առաջարկվում է «Medicare»-ի Ձեր ներկա ծրագիրը տրամադրվող ընկերության կողմից:

Ընտրության ուրիշ ի՞նչ տարբերակներ ունեմ ես:

Դուք ընտրության երկու տարբերակ ունեք այն հարցում, թե ինչպես ստանաք «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները:

A տարբերակ. Անդամագրվել «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի: Նոր ծրագիրը կտրամադրի «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները: Դուք կարող եք ավտոմատ կերպով ընդգրկվել «Cal MediConnect»-ի այն ծրագրերից մեկում, որն առաջարկվում է «Medicare»-ի Ձեր ներկա ծրագիրը տրամադրվող ընկերության կողմից, կամ կարող եք «Cal MediConnect»-ի որևէ այլ ծրագիր ընտրել: Դուք պետք է Ձեր ծրագրից կամ «California Health Insurance Counseling and Advocacy Program»-ից տեղեկանաք՝ արդյոք Ձեր սպասարկողներն ընդգրկված են սվյալ ծրագրի ցանցում, թե Ձեզ անհրաժեշտ է լինելու փոխել սպասարկողներին:

B տարբերակ. Անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ ծրագրի: Եթե Դուք այս տարբերակն ընտրեք, ապա «Medicare»-ի Ձեր նպաստները կստանաք ո՛չ թե որևէ առողջապահական ծրագրի, այլ սովորական «Medicare»-ի միջոցով:

- «Medicare»-ի Ձեր նպաստները Դուք կստանաք ո՛չ թե որևէ առողջապահական ծրագրի, այլ սովորական «Medicare»-ի միջոցով: Դուք պետք է նաև անդամագրվեք «Medicare»-ի դեղատոմսային դեղերի որևէ ծրագրի, այլապես «Medicare»-ն ինքը Ձեզ կընդգրկի նման մի ծրագրում:

(շրջել)

- «Medi-Cal»-ի նպաստները Դուք «Medi-Cal»-ի մի առանձին ծրագրից կստանաք: Դրանց թվում են՝ «In-Home Supportive Services»-ը (IHSS), «Multipurpose Senior Services Program»-ը (MSSP), «Community-Based Adult Services»-ը (CBAS) և ծերանոցային խնամքը, եթե Դուք բավարարեք այդ ծառայությունները ստանալու պահանջները:

Այս ներդիրի հետ միասին Ձեր ստացած մյուս նամակում այս B տարբերակը կոչվում է՝ **«Անփոփոխ պահել իմ «Medicare»-ը եՎ «Medi-Cal»-ի որևէ ծրագրում ընդգրկվել:»** Քանի որ Դուք «Medicare Advantage Plan»-ի ծրագրի անդամ եք, ապա B տարբերակն ընտրելու դեպքում Դուք չեք կարող անփոփոխ պահել Ձեր «Medicare»-ը:

Այս ներդիրի հետ Ձեզ նամակ է ուղարկվել, որը լրացուցիչ տեղեկություններ է պարունակում «Cal MediConnect»-ի և Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին:

Ինչպե՞ս կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ:

Եթե ցանկանում եք՝	Ձանգահարեք՝
անվճար խոսել առողջության ապահովագրության հարցերով խորհրդականի հետ այս փոփոխությունների և Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին	«California Health Insurance Counseling & Advocacy Program» (HICAP)՝ 1-800-434-0222 կամ TTY 711 հեռախոսահամարով:
«Cal MediConnect»-ի մեկ այլ ծրագիր ընտրել առանձին պահել Ձեր «Medicare»-ը և «Medi-Cal»-ի ծրագիր ընտրել այս նամակը ստանալ մեկ այլ լեզվով, խոշորատառ տպագրությամբ, ձայնագրված կամ Braille-ի գրատիպով	«Health Care Options»-ի հաճախորդների սպասարկման բաժին՝ երկուշաբթի-ուրբաթ՝ ժամը 8:00-ից 17:00՝ 1-844-580-7272 կամ TTY՝ 1-800-430-7077 հեռախոսահամարով:
Միայն B տարբերակն ընտրելու դեպքում Դուք կարող եք՝ «Medicare»-ի մեկ այլ ծրագիր ընտրել «Medicare»-ի դեղատոմսային դեղերի ծրագիր ընտրել	1-800-MEDICARE (1-800-633-4227)